https://doi.org/10.59821/18294219-2025.2-vdk03

Աղավնի Մադոյան
ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀԱՅՑԱՏԵՍԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ[1]

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության դատախազության՝ վարչական դատավարության կարգով, մասնավորապես՝ վիճարկման հայցատեսակով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությանը, դրա շրջանակներում ՀՀ Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված առանձնահատկությունների հետազոտմանն ու վերլուծությանը:

Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների լույսի ներքո առանձնահատուկ քննարկման առարկա է հանդիսանում վճարկման հայցատեսակով դատավարական ժամկետի հաշվարկման հիմնախնդիրը, մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հայց հարուցելու լիազորություն ունեցող սուբյեկտներին վերաբերելի դատավարական ժամկետներ սահմանված չլինելու օրենսդրական բացը, իրավակիրառ պրակտիկայի միջոցով նշված բացը լիարժեք լրացնելու և կայուն դատական պրակտիկա ձևավորելու հնարավորության հիմնախնդիրը, որի արդյունքում հեղինակի կողմից կատարվում են որոշակի եզրահանգումներ և ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

Հիմնաբառեր- պետական շահ, վարչական ակտ, վարչական ակտի ուժի մեջ մտնել, վիճարկման հայց, դատավարական ժամկետ, դատախազություն, լիազորություն:

[1]Հոդվածը ներկայացվել է 23.02.2024թ., գրախոսվել է 22.04.2024թ.:

Ներածություն

Դատախազությունն իր սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառույթներով առանցքային դեր է զբաղեցնում պետական շահերի պաշտպանության ոլորտում:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում Դատախազությանը վերապահվեց համայնքային շահի պաշտպանության նպատակով հայց հարուցելու լիազորությունը, որն իր հերթին հանգեցրեց Դատախազության կողմից վարչական դատավարության կարգով հարուցվող հայցերի կտրուկ ավելացման:

Դրանով պայմանավորված՝ ուսումնասիրվող թեման ներկայումս արդիական է, քանզի իրավակիրառ պրակտիկայում երբեմն խնդրահարույց է դառնում վարչական դատավարության կարգով հայց հարուցելու դատավարական ժամկետների հաշվարկը, որի արդյունքում փաստացի դժվարանում է պետական (համայնքային) շահերի պաշտպանության դատախազական լիազորության արդյունավետ իրականացումը:

Դատախազությունն **օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով** պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան *(ՀՀ Սահմ.176-րդ հոդվածի 3-րդ կետ):*

Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝ (…) **վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը** *(«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):*

Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ **խախտվել** կամ **անմիջականորեն կարող են խախտվել** պետության կամ համայնքի այն իրավունքները, **որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա**, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով *(ՀՀ վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետ):*

Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝ իր լիազորություններն իրականացնելիս ***հայտնաբերում է,*** որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, ***իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին,*** դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ պետական շահերի ***խախտում է տեղի ունեցել այն հարցերով***, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակա-

ռավարման մարմնի.(...) *(«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր):*

Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է այն ***բոլոր իրավունքների ու պարտականությունների շրջանակը***, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին *(«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետ):*

Նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ վարչական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազի իրավունքը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, այն է. Դատախազն իր լիազորություններն իրականացնելիս ***իրազեկվել է*** վարչական ակտի, գործողության կամ անգործության մասին, և Դատախազն իր լիազորություններն իրականացնելիս ***պարզել է***, որ տվյալ վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ տեղի է ունեցել պետական շահերի խախտում:

Սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հայց հարուցելու լիազորություն ունեցող սուբյեկտների վերաբերյալ դատավարական ժամկետների անորոշության պատճառով խնդրահարույց է դառնում այդ լիազորության արդյունավետ իրականացումը:

ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝* ***վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից*** *(...):*

Ակնհայտ է, որ օրենսդիրը վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի սկիզբը կապել է վարչական ակտի ուժի մեջ մտնելու հետ:

Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդ. 1-ին մասի՝ *գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ* ***ակտի ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից,*** *եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:*

Վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետի *(ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ)* սկիզբը որոշելու համար կարևոր է վիճարկվող վարչական ակտի մասին վարչական ***վարույթի մասնակիցների*** իրազեկման օրը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդ. 1-ին մասի՝ *վարչական մարմինը վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է* ***վարույթի մասնակիցներին***՝ *հանձնման կամ հրապարակման եղանակով:*

Այս առումով առանցքային նշանակություն ունի այն հարցը, թե ովքեր են վարույթի մասնակիցները, որոնց պետք է իրազեկել վարչական ակտի ընդուման մասին: Այս հարցն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում, որի 1-ին մասում սահմանում է. «*Վարչական վարույթի մասնակիցներն են* ***ա) վարչական ակտի***

հասցեատերը՝ *այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.* ***բ) երրորդ անձինք՝*** *այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով»:*

Ստացվում է, որ Դատախազությունն ուղիղ իմաստով պետական շահերին առնչվող վարչական ակտի հասցեատեր չէ, սակայն, օժտված լինելով պետական շահերի պաշտպանության նպատակով վարչական դատավարության կարգով հայց հարուցելու լիազորությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է վիճարկել պետության օրինական շահերը խախտող վարչական ակտերը:

Այստեղից առաջանում է այն հարցը, թե Դատախազության համար երբ է սկսում հոսել պետական շահերի պաշտպանության նպատակով վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը:

Ինչպես վերևում նշվեց, Դատախազությունն ուղիղ իմաստով չի հանդիսանում վարչական ակտի հասցեատեր, այլ իրականացնում է պետության կողմից իր իրավունքների պաշտպանության պատվիրակված լիազորությունը, ուստի պետության իրավունքները շոշափող վարչական ակտի մասին վարչական մարմինը չի իրազեկում Դատախազությանը, հետևաբար, անորոշ է մնում, թե պետության իրավունքները շոշափող վարչական ակտը Դատախազության համար երբ է ուժի մեջ մտնում:

Դատախազությունը գործում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, որտեղ ընդգրկված չէ հանրային մարմինների ընդունած բոլոր որոշումների նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավական հնարավորությունը. ՀՀ դատախազությունն օժտված չէ, այսպես կոչված, «ընդհանուր հսկողություն» իրականացնելու գործառույթով և վարչական մարմիններն էլ պարտավոր չեն իրենց բոլոր վարչական (անհատական իրավական) ակտերի մասին իրազեկել ՀՀ դատախազությանը: Ուստի, տրամաբանական է, որ ՀՀ դատախազությունը կարող էր տեղեկանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի գոյության մասին բացառապես ի պաշտոնե գործելիս՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների կատարման ընթացքում:

Հատկանշական է նաև այն, որ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունքը Դատախազության համար ինքնին չի կարող ծագել վարչական ակտի գոյության մասին իմանալու պահից: Դատախազությունը նշված լիազորությունը կարող է իրականացնել ***բացառիկ դեպքում և կարգով***, որի հիմնական բաղադրիչը լիազորությունների իրականացման ընթացքում պետական շահի ***խախտման փաստի մասին իրազեկվածությունն է:***

Այս առումով կարևոր դիրքորոշում է հայտնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը՝ արձանագրելով, որ ՀՀ գլխավոր դատախազությունը ապրիորի («a priori») չէր կարող տեղեկացված լինել այս կամ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կայացված բոլոր վարչական ակտերի

գոյության մասին, առավել ևս գնահատել դրանց իրավաչափության հիմնահարցը: Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է հետևյալը. *«…խնդրահարույց որոշումների գոյության մասին իրազեկվելն ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ ՀՀ գլխավոր դատախազության կողմից վարչական դատավարության կարգով հայցի հարուցման գործընթացը նախաձեռնելու համար, քանի որ անհրաժեշտ էին համապատասխան իրավական հիմքեր, որոնք ի հայտ են եկել միայն քրեական գործով վերջնական որոշման՝ (…) «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման ընդունմամբ, որով և հաստատվել է սույն գործով էական նշանակություն ունեցող որոշակի փաստերի առկայությունը»*[2]:

Մինչդեռ, նույն գործով, Վճռաբեկ դատարանը, հանգել է հետևության, որ անհրաժեշտ է պարզել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և 28-րդ հոդվածներին համապատասխանության հարցը և դիմել Սահմանադրական դատարան:

Վճռաբեկ դատարանը դիմումի հիմքում դրել է այն փաստարկը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վարչական վարույթի մասնակիցներ չեն կարող հանդիսանալ, ուստի վարչական ակտի ուժի մեջ մտնելու կանոնը, հետևաբար և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետը նրանց համար կիրառելի չէ: Արձանագրելով, որ օրենսդիրը պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք վերապահելով պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել այն ժամկետները, որոնց ընթացքում նշված սուբյեկտները կարող են դիմել ՀՀ վարչական դատարան: Հետևաբար, Վճռաբկեկ դատարանը գտել է, որ օրենսդրության մեջ առկա չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանափակում և այդ բացը լրացնելու իրավական երաշխիքներ:

Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներով ամրագրված սկզբունքները համընդհանուր և հիմնարար սկզբունքներ են, որոնց ուժով, ի թիվս այլնի, պետք է ապահովվեն նաև հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար: Մասնավորապես՝ դատարան դիմելու համար օրենսդրական կարգավորումները, այդ թվում նաև՝ ժամկետային սահմանափակումները պետք է հավասարապես կիրառելի լինեն յուրաքանչյուրի նկատմամբ՝ անկախ նրանց կարգավիճակից: Մինչդեռ ըստ Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ 72-րդ հոդվածով

[2] Տե՛ս թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.06.2020 թվականի որոշումը:

սահմանված չլինելու հետևանքով վերջիններս ձեռք են բերում դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, և հնարավորություն են ստանում վիճարկման հայցը դատարան ներկայացնել առանց ժամկետային սահմանափակման: Նշված համատեքստում Վճռաբեկ դատարանի մոտ ձևավորվել է հիմնավոր կասկած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ այնքանով, որքանով նշված իրավանորմը չի նախատեսում նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական որևէ ժամկետ, որպիսի պարագայում վերջիններիս ընձեռնվում է անսահմանափակ ժամկետներում վիճարկման հայց ներկայացնելու հնարավորություն, ինչը չի կարող համատեղելի լինել իրավական պետության, իրավական որոշակիության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սահմանադրական հիմնարար սկզբունքների հետ և խաթարում է իրավական անվտանգությունը, քանի որ նշված սուբյեկտների կողմից կարող են վիճարկման առարկա դառնալ այնպիսի վաղեմության վարչական ակտեր, որոնց ոչ միայն վստահելու իրավունք են ունեցել այդ ակտի հասցեատերերը, այլ նաև դրանցով տրամադրված իրավունքները վաղուց իրացվել են՝ դառնալով քաղաքացիաիրավական շրջանառության օբյեկտներ:

Ստացվում է, որ Վճռաբեկ դատարանը գտել է, որ առկա է օրենքի այնպիսի բաց, որը հնարավոր չէ հաղթահարել Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման սահմանադրական գործառույթների իրացման համատեքստում: Այսինքն, առկա է օրենքի չպլանավորած անլիարժեքություն, այնքանով որքանով օրենսդիրը, սահմանելով վարչական վարույթի մասնակիցների համար վարչական ակտի վիճարկման ստույգ դատավարական ժամկետ, պետք է կարգավորեր նաև վարչական վարույթի մասնակից չհանդիսացող, սակայն, վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտների կողմից հայց հարուցելու դատավարական ժամկետները:[3]

Մինչդեռ, ՀՀ սահմանադրական դատարանի 05.08.2021 թվականի թիվ ՍԴԱՈ-175 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունը մերժվել է այն հիմնավորմամբ, որ տվյալ դեպքում առկա է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի վերաբերյալ օրենսդրական կարգավորում, որի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հնարավորություն ունի գնահատելու կոնկրետ դեպքում նշված ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու և այն վերականգնելու հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությունը, որպիսի

[3] Օրենքի բացի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Գ.Հովհաննիսյան «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն» էջ՝ 358-359:

լիազորությունների իրականացումն էլ բացառապես Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելության իրացման տիրույթում է»:[4]

Դրանից հետո, Վճռաբեկ դատարանը, օրենսդրական բացը հաղթահարելու նպատակով, նախադեպային որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտներին վերապահելով պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք, միևնույն ժամանակ սակայն, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել նշված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարությունում վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև հավասարակշռությունն ապահովելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի հաշվարկման համար պետք է հիմք ընդունվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրա-վակարգավորումն այն մեկնաբանմամբ, որ նշված իրավանորմում օգտագործված **«վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից»** եզրույթը ՀՀ վարչական դատա-վարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների համար պետք է դիտարկվի որպես վիճարկվող վարչական ակտի մասին վերջիններիս կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից ընդդեմ վարչական մարմինների վիճարկման հայցը կարող է ներկայացվել երկամյա ժամկետում՝ այն պահից սկսած, երբ հայցվոր վարչական մարմինն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվել է վարչական ակտի գոյության մասին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վերոգրյալ մեկնաբանմամբ կիրառելը ոչ միայն բխում է իրավական պետության, իրավական որոշակիության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից՝ երաշխավորելով իրավական անվտանգությունը, այլ նաև ապահովում է հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար՝ անկախ նրանց կարգավիճակից»[5]:*

Հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանն ընդգծել է. իրավական նորմը իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքի հետ հակասության մեջ լինելու դեպքում, չի կարող համարվել «օրենք»: Իրավական նորմը պետք է

[4] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 05.08.2021 թվականի թիվ ՍԴԱՈ-175 որոշումը:

[5] Տե՛ս թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2021թ. նոյեմբերի 9-ի որոշումը:

ձևակերպված լինի բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա իրավունքի սուբյեկտին դրա հետ համատեղելու իր վարքագիծը:[6]

Մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. *Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը:*[7]

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, այսինքն իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

Սահմանադրական դատարանը մի շարք այլ որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին:[8]

Մինչդեռ, իրավական անորոշությունն իր հերթին իրավակիրառողին տալիս է լայն մեկնաբանման հնարավորություն, որը ոչ միշտ է լինում իրավունքի գերակայության և իրավական պետության սկզբունքներին համահունչ, ինչը կարող է հանգեցնել իրավունքների սահմանափակման:

---

[6] Տե՛ս ՍԴՈ-630 որոշումը:
[7] Տե՛ս 13 մայիսի 2008 թ.ՍԴՈ-753 որոշումը:
[8] Տե՛ս ՍԴՈ-1142 որոշումը:

Ասվածի վառ օրինակ է նաև այն, որ Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը իրավակիրառ պրակտիկայում տարընթերցումների և տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տվել, մասնավորապես՝ թիվ ՎԴ/3022/05/23 վարչական գործով վարչական դատարանը վիճարկման հայցատեսակով դատախազության կողմից ներկայացված հայցի երկամսյա դատավարական ժամկետի հոսքը կրկին պայմանավորել է վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահով՝ անտեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի այն մոտեցումը, ըստ որի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումն այն մեկնաբանմամբ, որ նշված իրավանորմում օգտագործված ***«վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից»*** եզրույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների համար պետք է դիտարկվի որպես վիճարկվող վարչական ակտի մասին վերջիններիս կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահ:

Նշված գործով Դատախազությունը 2023 թվականի ապրիլի 21-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կառավարության՝ վիճարկելով Երևանի քաղաքապետի կողմից ընդունված 2004 թվականի որոշումը: Միաժամանակ վիճարկման հայցատեսակով դատավարական ժամկետի հաշվարկը Դատախազության կողմից մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո և ելնելով այն փաստից, որ վիճարկվող որոշման մասին Դատախազության իրազեկման պահից մինչև պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու պահը սպառված չի եղել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը, ըստ էության դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտություն չի տեսել:

Մինչդեռ, ՀՀ վարչական դատարանը, կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ արձանագրելով հետևյալը. «*Ներկայացված հայցը համապատասխանում է Վարչական դատավարության օրենսգրքի (ՎԴ օրենսգիրք) 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցին, ուստի դրա նկատմամբ տարածվում է 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից: Հայցվորը վիճարկում է Երևանի քաղաքապետի 2004 թվականի հունվարի 16-ի թիվ 35-Ա որոշումը: Սակայն հայցվորը բաց է թողել ՎԴ օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը և ՎԴ օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով չի ներկայացրել այն վերականգնելու մասին միջնորդություն»:*

Ժամկետի հաշվարկն առավել խնդրահարույց դրսևորում է ստացել նույն գործով վերաքննիչ վարչական դատարանի որոշման մեջ:

Նշված գործով Վերաքննիչ վարչական դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքները, նախ արձանագրել է, որ Դատախազության կողմից պետության (համայնքի) իրավունքները խախտող վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ օրենքով նախատեսված չլինելու պարագայում դատախազությունը պետք է ղեկավարվեր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետով՝ այդ ժամկետի հոսքը պայմանավորելով վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվելու պահով:

Այնուհետև վերաքննիչ դատարանը շարունակելով վերլուծությունն արձանագրել է, որ ըստ դատախազության՝ վիճարկվող որոշման մասին վերջինիս լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահն է 09.03.2023 թվականը, մասնավորապես՝ վերջինս իրազեկվել է ՀՀ կադաստրի կոմիտեի 09.03.2023 թվականի թիվ ԱՊ/2943-2023 գրությանը կից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, մինչդեռ սույն դեպքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պարզ չէ, թե դատախազության որ, ինչպես նաև երբ իրականացված լիազորությունների (դրանք են՝ հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան) իրականացման ընթացքում է վերջինս իրազեկվել վարչական ակտի գոյության մասին, ինչը հնարավորություն կտար գալ օբյեկտիվ եզրահանգման վիճարկվող որոշման մասին դատախազության կողմից լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահի վերաբերյալ: Այսինքն, այլ կերպ ասած՝ պետք է հստակ և պարզ լինի, թե դատախազության կոնկրետ որ և երբ իրականացված լիազորության/լիազորությունների իրականացման ընթացքում է վերջինս իրազեկվել վիճարկվող որոշման մասին:[9]

Մեկ այլ գործով Վարչական դատարանը, մեկնաբանելով վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, արձանագրել է հետևյալը. *«…Տվյալ դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունը ներկայացված հայցադիմումով, որպես հիմնական պահանջ խնդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 27.10.2006 թվականի թիվ 1738-Ա որոշումը, այսինքն՝ ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վիճարկման հայց, որի ներկայացման համար սահմանված է երկամսյա ժամկետ՝*

[9] Տե՛ս թիվ ՎԴ/3022/05/23 վարչական գործով վերաքննիչ վարչական դատարանի 11.09.2023թ. որոշումը:

***հաշվված վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից**, որպիսի ժամկետը սակայն հայցվորը բաց է թողել»:*[10]

Վերը նշված գործով վարչական դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի ուղենիշային դիրքորոշումն առ այն, որ ՀՀ ՎարչԴատՕր-ի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների՝ այդ թվում Դատախազության համար, վիճարկման հայցատեսակի դատավարական **երկամսյա ժամկետի սկիզբը** պետք է համարել նշված սուբյեկտների կողմից վիճարկվող վարչական ակտի գոյության մասին իմանալու պահը, այդուհանդերձ վարչական ակտը վիճարկելու դատավարական երկամսյա ժամկետը կրկին **հաշվարկել է վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից**:

Հատկանշական է, որ վարչական դատարանի վերը նշված դիրքորոշման հետ համաձայնել է նաև վերաքննիչ վարչական դատարանը՝ անփոփոխ թողնելով վարչական դատարանի նշված որոշումը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ իրավակիրառ պրակտիկայում Վճռաբեկ դատարանի հայտնած դիրքորոշումն արդյունավետորեն չի կարողանում լրացնել օրենքում առկա բացը, այնքանով որքանով նույն որոշումը տարբեր դատարանների կողմից մեկնաբանվում և կիրառվում են խիստ տարակերպ, ինչի արդյունքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված սուբյեկտները չեն կարող բավարար հստակությամբ իրենց վարքագիծը համապատասխանեցնել օրենքին և դրա վերաբերյալ Վճռաբեկ դատարանի հայտնած դիրքորոշմանը:

Եզրակացություն

Այսպիսով, Սամանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով Դատախազության պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրական հատուկ կարգավորմամբ որոշակիացնել դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները:

Իրավակիրառ պրակտիկայի վերը նշված մեջբերումները ևս վկայում են այն մասին, որ օրենքում առկա է օրենսդրի կողմից չպլանավորած բաց, որը լիարժեքորեն չի կարող հաղթահարվել դատական պրակտիկայի միջոցով, ուստի անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ևս (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում) կանոնակարգել և հստակեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ դատախազության համար դատավարական հստակ ժամկետներ՝ դրանով իսկ գործնականում բացառելով խնդրի վերաբերյալ տարակերպ մեկնաբանու-

[10] *Տե՛ս թիվ ՎԴ/9153/05/23 գործով վարչական դատարանի 17.11.2023թ., ինչպես նաև նույն գործով վերաքննիչ վարչական դատարանի 09.01.2024թ. որոշումները:*

թյունները, որն իր հերթին կապահովի պետական շահերի պաշտպանության լիազորության առավել արդյունավետ իրականացումը:

Միևնույն ժամանակ իրավական պետության, իրավական որոշակիության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սահմանադրական հիմնարար սկզբունքներին համահունչ, պետք է ստեղծել հստակ կառուցակարգ՝ բացառելով Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի սուբյեկտների կողմից այնպիսի վաղեմության վարչական ակտերի վիճարկման հնարավորությունը, որոնց վստահելու իրավունք են ունեցել ակտի հասցեատերերը, ինչպես նաև դրանցով տրամադրված իրավունքները որոշակի ժամանակահատվածում իրացվել են՝ դառնալով քաղաքացիաիրավական շրջանառության օբյեկտներ: Ուստի, հեղինակի կողմից առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. *«Հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ 1) վիճարկման հայցի դեպքում՝ վարչական վարույթի մասնակիցների կողմից՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, իսկ սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի մասին իրազեկվելու պահից, բաց ոչ ուշ, քան վարչական ակտի ընդունման օրվանից 10 տարվա ընթացքում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:*

Միաժամանակ, հանրային շահի ապահովման նպատակից ելնելով, անհրաժեշտ է օրենքով սահմանել բացառություն՝ հատուկ կարգավորում նախատեսելով այն իրավահարաբերությունների վերաբերյալ, որոնցում վարչական ակտերի ազդեցությունը առավել նշանակալից են հանրային շահի տեսանկյունից, օրինակ՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի կարգավորման տիրույթում գտնվող հողերի վերաբերյալ ընդունված վարչական ակտերի վիճարկման հնարավորությունը պետք է դուրս բերվեն ընդհանուր ժամկետային սահմանափակումներից, հաշվի առնելով այն, որ դրանցով սահմանված կամ շրջանցված ռեժիմներն ուղղակիորեն առնչվում են հանրային շահին, շրջակա միջավայրի պահպանությանը, պետական/համայնքային անվտանգությանը: Հետևաբար, նման հարաբերություններում անհրաժեշտ է կիրառել շարունակական իրավախախտման դոկտրինան և բացառել վարչական ակտի վիճարկման ժամկետային որևէ սահմանափակում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Գ.Հովհաննիսյան՝ «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն» էջ՝ 358-359:

2. ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 06-ի խմբագրություններով):

Constitution of RA (with the editions of J December 06, 2015).

3. 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-198-Ն):

Law of RA "On Prosecution" adopted on November 17, 2017 (NL-198-N).

4. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 որոշումը:

Decisions of the Constitutional Court of RA, DCC-630.

5. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1142 որոշումը:

Decisions of the Constitutional Court of RA, DCC-1142.

6. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-753 որոշումը:

Decisions of the Constitutional Court of RA, DCC-753.

7. Թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.06.2020 թվականի որոշումը:

Appeal Administrative Court of RA dated 04.06.2020 in the administrative case No. VD/1951/05/20.

8. Թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2021 թվականի որոշումը:

Cassation Court of RA dated 09.11.2021 in the administrative case No. 1951/05/20.

9. Թիվ ՎԴ/3022/05/23 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.09.2023 թվականի որոշումը:

Cassation Court of RA dated 11.09.2023 in the administrative case No. 3022/05/23.

10. Թիվ ՎԴ/9153/05/23 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 17.11.2023 թվականի որոշումը:

Court of RA dated 17.11.2023 in the administrative case No. 9153/05/23.

11. Թիվ ՎԴ/9153/05/23 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.01.2024 թվականի որոշումը:

Cassation Court of RA dated 09.01.2024 in the administrative case No. 9153/05/23.

Aghavni Madoyan

Senior Prosecutor of the Central Military Prosecutor's Office of the Republic of Armenia, Third Rank Counsellor of Justice, Degree Applicant of the Department of Civil Procedure of the Faculty of Law of Yerevan State University

PROBLEMS OF CALCULATING PROCEDURAL DEADLINES TO INITIATE A CLAIM FOR THE PROTECTION OF INTERESTS VIA DISPUTE CLAIMS WITHIN THE SCOPE OF RA COURT OF CASSATION POSITIONING[11]

Abstract

The article is devoted to the powers of the Prosecutor's Office of the Republic of Armenia to initiate a claim for the protection of property and non-property interests of the state in the course of administrative proceedings. It is aimed at studying and analyzing the features provided for by the Constitution of the Republic of Armenia, the Law of the Republic of Armenia "On the Prosecutor's Office", as well as the Code of Administrative Procedure of the Republic of Armenia.

In the light of the positions of the Constitutional Court of the Republic of Armenia and the Court of Cassation of the Republic of Armenia, the issue of calculating the procedural period according to the type of claim in dispute is the subject of special discussion. In particular, the gap in the legislation lies in the fact that there are no procedural deadlines relating to subjects entitled to initiate a claim fixed by Part 3 of Article 3 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia, the problem of the possibility of fully filling this gap and the formation of stable judicial practice through law enforcement practice, as a result, the authors draw specific conclusions and submit relevant proposals.

Keywords: state interest; administrative act; entry into force of an administrative act;dispute claim; procedural term; powers.

[11] The article was presented on 23.02.2024 and was reviewed on 22.04.2024.

Агавни Мадоян
Старший прокурор Центральной военной прокуратуры Республики Армения, советник юстиции третьего класса, соискатель кафедры гражданского судопроизводства юридического факультета Ереванского государственного университета

ПРОБЛЕМЫ ВЫЧИСЛЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ СРОКОВ ДЛЯ ВОЗБУЖДЕНИЯ ИСКА О ЗАЩИТЕ ГОСУДАРСТВЕННЫХ ИНТЕРЕСОВ ПОСРЕДСТВОМ ИСКОВ ОБ ОСПАРИВАНИИ В РАМКАХ ПОЗИЦИИ КАССАЦИОННОГО СУДА РА[12]

Абстракт

Статья посвящена полномочиям прокуратуры Республики Армения возбуждать иск о защите имущественных и неимущественных интересов государства в порядке административного судопроизводства, изучению и анализу особенностей, предусмотренных Конституцией Республики Армения, Законом Республики Армения «О прокуратуре», а также Кодексом административного судопроизводства Республики Армения.

В свете позиций Конституционного суда РА, кассационного суда РА предметом особого обсуждения является проблема расчета процессуального срока по типу иска об оспаривании. В частности, пробел законодательства заключается в том, что не установлены процессуальные сроки, относящиеся к субъектам, имеющим право возбуждать иск, установленный частью 3 статьи 3 административно-процессуального кодекса РА, проблема возможности полного заполнения указанного пробела и формирования стабильной судебной практики посредством правоприменительной практики, в результате чего авторами делаются конкретные выводы и представляются соответствующие предложения.

Ключевые слова: государственный интерес; административный акт; вступление в силу административного акта; иск об оспаривании; процессуальный срок; полномочия.

[12] Статья была представлена 23.02.2024 и прошла рецензирование 22.04.2024.